

Ա.Ա.Պողօսկին

Յարեց Հայաստան

891.710  
Դ-97





CONFIDENTIAL COMMUNIQUE

CONFIDENTIAL COMMUNIQUE

30 MAY 2011

А.С.Пушкин

# Три сказки




ГОСУДАРСТВЕННОЕ ИЗДАТЕЛЬСТВО  
ЕРЕВАН

1937

891715  
N-97  
Ա.Ս.Պուշկին

# ՅԵՐԵՔ ՀԵՐՑԱԹ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՈՒՅՑԻ  
ՅԵՐԵՎԱՆ

1937

23.07.2013

4839



1800

38



ՀԵՇՅԱԹ ՍՍԼԹՈՒՆ ԱՐԲԱԾԻ, ԵՐԱ. ՎՈՐԴԻՔ ՓԱ-  
ԼԱՊԱՅՈՒՄ ՅԵՎ, ՃԶՈՐ ԿՅՈՒՅԱԶՆ, ԽՇԵԱՆ ԳՎԻԴՈՒՆ  
ՍՍԼԹՈՒՄԻՉԻ ՅԵՎ, ԳԵՎԵՑԵՄԻՆՀԻ ԱՐԲԱԾՈՒՄՈՒՏ  
ԿԱՐԱՊԻ ՄՊԱՄԻ,

1831



Յերեք աղջիկ, յերեք քուլըեր,  
Մանում եցին մինչ ուշ գիշեր:  
—Թե թագուհի դառնամ հանկարծ,  
Աղջիկներից մեկը ասաց.  
—Յես կասրքեմ վողջ աշխարհում  
Ուբախ մի քեզ, լավ կերուխում:  
—Թե թագուհի դառնամ հանկարծ,  
Մյուս քույրիկը նրա ասաց.  
—Վողջ աշխարհի համար մենակ,  
Յես կըզործեմ քաթան բարակ:  
—Թե թագուհի դառնամ հանկարծ,  
Այս յերբորդն այսպես ասաց.  
—Հայր արքայի համար մի որ  
Յես կըծնեմ հսկա հզոր:

Հենց իւ խոսքը նա ավարտեց,  
Դուռը կամաց ճռաաց, բացվեց,  
Սենյակ մտավ արքան զորեղ,  
Այս յերկրի տերը ահեղ:  
Խոսակցության նա ընթացքում  
Ցանկապատին մոտ ե լինում.  
Յեկ խոսքերը այն վերջինի  
Նրա սրտին դուք են գալի:  
—Վողջո՞ւյն, —ասավ, —իմ սիրունիկ,  
Յեկ, թագուհի յեղիք, աղջիկ,

Յեվ ինձ համար ծնիր հսկա—  
Սեպտեմբերի վերջը վոր գա:  
Իսկ դուք, քույրեր, աղամակներ,  
Թողեք հիմա սենյակը ձեր,  
Յերկուսովը ինձ հետ յեկեք,  
Ինձ և քրոջը ձեր հետեւք:  
Թող այս մեկը՝ ջուլհակուհի,  
Յեվ խոհարար մշուսը լինի:—  
Բոլորն այսպես և հայր արքան  
Դեպի պալատ ճամբա ընկան:  
Արքան յերկար չպատրաստվեց,  
Յերեկոյան դեմ պսակվեց.  
Նստեց արքան ազնիվ քեֆին,  
Հետո ել ջահել իր թագուհին:  
Յեվ հյուրերն ազնիվ նրա  
Մահճակալին փլոսկըյա  
Պառկեցրեցին ջահելներին,  
Հետո մենակ նրանց թողին:  
Խոհարարը խոհանոցում,  
Ջուլհակուհին լաց են լինում.  
Կատաղում են և նախանձում  
Թագավորի պերճ ամուսնուն:  
Իսկ թագուհին ջահել հալով,  
Իր խոստումը կատարելով,  
Նույն գիշերն ե հենց ծանրանում:

Պատերազմ եր այն կողմերում:  
Սալթան արքան հրաժեշտ տվեց,  
Բաշ նժուզին հետո նստեց,  
Յեվ պատվիրեց իր ամուսնուն,

Հանուն սիրո՞ լինել խոնուն:  
Մինչդեռ արքան հեռուներում  
Քաջ կովում եր, պատերազմում,  
Կիսը ծնեց չքնաղ տղա,  
Մի արշին եր բոյը նքա,  
Իսկ թագուհին նբա կողքին,  
Արծվի պես, պաշտպան ձագին,  
Նա կանչում ե մի սուրհանդակ,  
Հորը գրում ուրախ նամակ:  
Խոհարարը, ջուլհակուհին,  
Կինարմատը՝ կին՝ խնամին  
Վնաս հասցնել վորոշեցին,  
Սուրհանդակին բռնել տվին,  
Մի ուրիշին ուղարկեցին,  
Այսպես ասել պատվիրեցին.  
«Վոր ծնել ե կինդ ահա,  
Վոչ աղջիկ ե, վոչ ել տղա,  
Վոչ ել մի գորտ, կամ թե մկնեկ,  
Մի անծանոթ գաղան փոքրիկ»:—

Յերբ հայր արքան վողջը լսեց,  
Սուրհանդակը ինչ հաղորդեց,  
Խիստ զայրացավ, գոռաց ուժգին,  
Ուզեց կախել սուրհանդակին,  
Բայց փափկելով այս մեկ անգամ,  
Սուրհանդակին տվակ հրաման,—  
«Սպասեցեք գուք իմ գարձին,—  
Ճշմարտությամբ արվող դատին»:

Սուբհանդակը համբաւ ընկալի,  
 Յեվ վերջապես պալատ հասավ:  
 Խոհարաբը, ջուլհակուհին,  
 Կինարմատը՝ կին—խնամին  
 Թալանելու հրաման տվին  
 Նրան մի լավ հարբեցրեցին.  
 Իսկ պարկի մեջ նրա դատարկ՝  
 Դրին ծածուկ ուրիշ նամակ:  
 Յեվ նույն որը հարբած ծառան  
 Մի այսպիսի բերեց հրաման.  
 —«Հրամայում եմ իշխաններին,  
 Վոր չուշացնեն, ժամանակին,  
 Յեվ մանկանը, և թագուհուն—  
 Ծածուկ զցեն ծովն անհուն»:  
 Դե ինչ արած... Ավսոսացին  
 Իշխանները թագավորին.  
 Ավսոսալով և թագուհուն՝  
 Ննջարան են խմբով մտնում,  
 Կամքը հայտնում թագավորի  
 Յեվ վիճակը իր սոսկալի:  
 Հենց հրամանն ընթերցեցին,  
 Յեվ թագուհուն, և տղային,  
 Տակառի մեջ նստեցրեցին,  
 Այն ձյութեցին, գլորեցին,  
 Մինչ ովկիանը հասցրին անհայտ,  
 Զե՞ Սալթանի հրամանն եր այդ:

Կապույտ յերկնում աստղեր շողուն,  
 Կապույտ ծովում ջուրն և ծփում,  
 Ամպն և անցնում բիլ յերկնքում,

Յեվ տակառն և ծովում լողում,  
 Մեջը, ինչպես այրի մի կին,  
 Լաց և լինում խեղճ թագուհին,  
 Ուր մանուկն և իր մեծանում,  
 Ու ժամերով հասակ առնում:  
 Որն անցնում և, մայրն և վողրում,  
 Յեվ ալիքն և վորպին քշում—  
 —«Դու ալիք իմ, ժիր ալիք,  
 Դու ազատ ես ման գալի,  
 Յեվ ճողփում ես դու անվերջ,  
 Բարն ես սրում ծովի մեջ,  
 Դու ափերը հեղեղող,  
 Նախ ես փրկում խորտակվող,  
 Մի կործանի մեր հոգին,  
 Մեղ հասցլու ցամաքին,  
 Յեվ ալիքը հնազանդվեց,  
 Իսկուն ափը դուրս հանեց  
 Նա տակառը շատ թեթև,  
 Հետո կամաց փախակ յետ:  
 Մայր ու մանուկ փրկվեցին,  
 Հողի բուրմունք դպացին:  
 Բայց տակառից ովկ կհաներ,  
 Պիտք եր աստծուն ապավինել,  
 Վոտքի կանգնեց փոքրիկ վորդին,  
 Պիսով հենցից առաստաղին,  
 Իր ուժերը մի քիչ լարեց,  
 —Պատուհան և մեվ պետք,—ասեց,  
 Փայտե տակը փշեց թեթև  
 Յեվ դուրս յեկալ գեղի վերև:  
 Յեվ ազատված, մայրն ու տղան

Շուտով մի թումբ և դաշտ տեսան,  
Շուրջը ծովով եր բիլ անձանաչ,  
Թմբի վրա կաղնի կանաչ:  
Յեզ մտածեց տղան, — հարմար  
Մի ընթրիք ե պետք մեզ համար:—  
Կաղնուց մի ճյուղ պոկեց այստեղ,  
Ծռեց, շինեց նա պիրկ աղեղ,  
Մետաքս յերիդ խաչից հանեց  
Յեզ աղեղի վրա լարեց.  
Յեղեգ կտրեց ձիգ ու յերկար,  
Շինեց թեթև նետ սրածակը,  
Գնաց հասավ հովտի ծայրին,  
Վորս փնտռելու ծովի ափին:

Հենց վոր ծովին նա մոտեցավ,  
Տնքոց լսեց մի սրաացավ,  
Վատ եր գործը, թվաց նրան,  
Անհանգիստ եր ծովի վրա,  
Մի կարապ եր լողում ցածում,  
Ցինը վրան պտույտ գործում.  
Ճողփում եր այն խեղաը ջրում  
Շուրջը իրա վողջ պղտորում.  
Ցին ճանկերն եր իր արձակել  
Յեզ կտուցն եր սրել, բացել:  
Մեկ ել նետը յերգեց, անցավ,  
Շաշեց, ցինի վզին կպավ  
Ցին ծովի մեջ արյուն թափեց,  
Եր աղեղը տղան դցեց.  
Տեսավ, ծովում ցինն ե խեղվում,  
Թոշունի պես նա չի տնքում,

Ու կարապն ե մոտից լողում,  
Ցինին կողքից կացահարում,  
Արագացնում վերջը նրա—  
Ծովում սուղում թևով իրա  
Արքայորդուն գիմում խոսում  
Յեզ մարդկային լեզով տառում,—  
—Արքայորդի, գու իմ փրկիչ,  
Դու իմ զորեղ, քաջ աղատիչ,  
Ո, մի տիրի այն պատճառով,  
Վոր չես ուտի յերեք գու որ,  
Վար քո նետը ծովում մնաց,  
Յավալի յե, բայց ինչ արած.  
Կվարձատրեմ բարությունով,  
Ծառայությամբ յես շատ շուտով:  
Կարապ չեր, վոր գու փրկեցիր,  
Մի աղջկան կյանք տվեցիր,  
Սպանեցիր վոչ թե ցինի,  
Այլ մի վուկ չար կախարդի:  
Չեմ մոռանա յես քեզ յերբեք,  
Ինձ կըգտնես ամենուրեք.  
Ել մի տիրի, գու յետ գարձիր  
Յեզ անուշիկ քուն վայելիր:

Թուավ գնաց կարապը այն.  
Յեզ թագուհին ու իր աղան  
Վորոշեցին քաղցած պառկել.  
Ոլն եր արդեն վաղուց անցել  
Արքայորդին զարթնեց քնից,  
Յերազները քշեց գլխից,  
Յեզ զարմացած տեսավ հանկարծ,

Շուտով մի թումբ և դաշտ տեսան,  
Շուրջը ծովն եր բիլ անձանաչ,  
Թմբի վրա կաղնի կանաչ,  
Յել մտածեց տղան, — հարմար  
Մի ընթրիք և պետք մեզ համար: —  
Կաղնուց մի ճյուղ պոկեց այստեղ,  
Ծոեց, շինեց նա պիրկ աղեղ,  
Մետաքս յերիդ խաչեց հանեց  
Յել աղեղի վրա լարեց.  
Յեղեդ կտրեց ձիգ ու յերկար,  
Եինեց թեթի նետ սրածար.  
Գնաց հասավ հովտի ծայրին,  
Վորս փնտոելու ծովի ափին:

Հենց վոր ծովին նա մոտեցավ,  
Տնքոց լսեց մի սրտացավ,  
Վատ եր գործը, թվաց նըան,  
Անհանդիստ եր ծովի վրա,  
Մի կարապ եր լողում ցածում,  
Տինը վրան պտույտ գործում.  
Ճողիում եր այն խեզը ջլում  
Շուրջը իրա վողջ պատորում.  
Տին ճանկերն եր իր արձակել  
Յել կտուցն եր սրել, բացել:  
Մեկ ել նետը յերգեց, անցավ,  
Շաշեց, ցինի վզին կպավ  
Տին ծովի մեջ արյուն թափեց,  
Իր աղեղը տղան գցեց.  
Տեսավ, ծովում ցինն և խեղպում,  
Թռչունի պես նա չի տնքում,

Ու կարապն և մոտից լողում,  
Ցինին կողքից կտցահարում,  
Արագացնում վերջը նըա—  
Ծովում սուզում թեռվ իրա  
Արքայորդուն գիմում խոսում  
Յել մարդկային լեզվով տառում: —  
— Արքայորդի, ոռու իմ փրկիչ,  
Դու իմ դորեղ, քաջ աղատիչ,  
Ո, մի տիրի այն պատճառով,  
Վոր չես ուտի յերեք դու որ,  
Կոր քո նետը ծովում մնաց,  
Յավալի էն, բայց ինչ արած.  
Կվարձատրեմ բարությունով,  
Ծառայությամբ չես շատ շուտով:  
Կարապ չեր, վոր ոռու փրկեցիր,  
Մի աղջկան կյանք տվեցիր,  
Սպանեցիր վոչ թե ցինի,  
Այլ մի վհուկ չար կախարդի:  
Չեմ մոռանա յես քեղ յերբեք,  
Ինձ կըգտնես ամենուրեք.  
Ել մի տիրի, զու յետ գարձիր  
Յել անուշիկ քուն վայելիր:

Թռավ գնաց կարապը այն.  
Յել թագուհին ու իր տղան  
Վորոշեցին քաղցած պառկել.  
Որն եր արդեն վաղուց անցել,  
Արքայորդին զարթնեց քնից,  
Յերազները քշեց գլխից,  
Յել զարմացած տեսավ հանկարծ,

Հոկա քաղաք գեմը կանգնած,  
 Պարիսպնելով ատամնավոր:  
 Փայլուն, շողուն դմբեթներով  
 Պատի յետև յեկեղեցի,  
 Յեվ սուրբ վանքեր շատ գեղեցիկ:  
 Նա զարթեցրեց մորը քնից,  
 Սա ախ քաշեց.—ի՞նչ կիհնի,—  
 Ասավ աղան,—տեսնում եմ յես,  
 Զգարձանում ե կարապը հեզ:—  
 Մայր ու աղա քաղաք մտան,  
 Հենց պարսպի յետև անցան,  
 Լովեց ականջ ծակող զողանջ,  
 Ամեն կողմից զանգ և շառաչ:  
 Ժողովուրդն ե դեմից յելնում,  
 Յեվ աստծուն փառաբանում:  
 Բազմած վոսկե պերճ կառքերում  
 Արքունիքն ե դիմավորում,  
 Մեծարում են արքայուրդուն,  
 Թագադրում, գլխին դնում,  
 Իշխանական գլխարկ նրան,  
 Տեր ընդունում իրենց վրան:  
 Մայրաքաղաք մտած անձամբ,  
 Մայր—թագուհու թույլտվությամբ,  
 Նա սկսեց կառավարել,  
 Իշխան Գլխիքն անուն կրել:  
 Հզբունում ե քամին ծովում  
 Յեվ նավակն ե առաջ քշում,  
 Վոր վազում ե ջրով յերեր,  
 Պարզած ճերմակ առագաստներ:  
 Նավորդներն են շատ զարմանում,

Յեվ նավակի վրա խմբվում,  
 Կղզու վրա իրենց ծանոթ  
 Հրաշք տեսնում նոր անծանոթ,  
 Վոսկե գմբեթ քաղաք մի նոր,  
 Նավահանգիստ մեծ, անսովոր.  
 Թնդանոթն ե սկսել կրակել,  
 Հրամայում ե նավին կանգնել:  
 Յեվ հյուրերը կանգ են առնում,  
 Ոյն Գվիդոնն ե նրանց կանչում,  
 Պատվիրում ե հյուրասիրել,  
 Հետո իրեն պատասխանել—  
 Ի՞նչ եք հյուրեր իմ, դուք ծախում,  
 Դեպի մուը եք հիմա լողում:—  
 Նավորդները ի պատասխան.  
 —Մենք աշխարհը անցանք, տեսանք,  
 Յեվ ծախեցինք սամուրենի,  
 Յեվ սեագորշ մորթ աղվեսի,  
 Ժամանակն ե մեր լրացել,  
 Դեպ արելք կուզենք դիմել,  
 Կղզու մոտով այն Բույանի,  
 Մինչ յերկերը քաջ Սալթանի:  
 Ու իշխանը ասաց.—Հիմա,  
 Զեզ, պարոնայք, բարի ճամբա,  
 Ովկիանոսով, կապույտ ծովով  
 Մինչ Սալթանը ձեր փառավոր:  
 Բարե տարեք ինձնից նրան:—  
 Յերբ հյուրերը ճամբա ընկան,  
 Քաջ Գվիդոնը կանգնած ափին,  
 Տխուր նայեց բանց վազքին:  
 Հանկարծ տեսավ, հոսող ջրում

1800  
38

Այն կարապն ե ճերմակ լողում.  
—Բարե՛, իշխա՞ն, չքնաղ, ջահել,  
ինչու գեմքիդ ամպ ե իջել,  
Յեվ ինչու յստ տխուր այդպես,—  
Նա Գվիդոնին հարցրեց այսպես:  
Իսկ իշխանը պատասխանեց.  
—Միրսո ցավ ե կրծում մի մեծ,  
Նա ճնշում ե ինձ, ջահելին,  
Կուզեմ տեսնել հորս անդին:—  
Իսկ կարապը:—Ահա թե ինչ,  
Թոբիր ծովով խաղաղ և ջինջ,  
Դու այն նալին հասիր, նստիր,  
Դե, իմ իշխան, մոծակ դարձիր:—  
Ու թերով թափահարեց,  
Շուրջը ջուրը նա շաղ տվեց,  
Յեվ իշխանին գլխից մինչ վոս  
Ջողեց թեռվ իրեն ջրոտ:  
Ինչպես մի կետ նա փոքրացավ  
Ու իշխանը մոծակ դարձավ.  
Ծովով թռավ ծվծվալով,  
Նավին հասավ նա շատ շուտով,  
Վրան իջավ և կամացուկ  
Խոր թագնվեց ճեղքում ծածուկ:  
Աղմկում ե ուրախ քամին,  
Յեվ նալակն ե վաղում կրկին,  
Կղզու մոտով այն Բույանի,  
Դեպ յերկիրը քաջ Սալթանի:  
Յեվ յերկիրը այն յերազած  
Հեռուներում պարզ յերևաց:  
Ափը իջան հյուրերն այն,

Հրավիրում ե նրանց արքան:  
Մինչև պալատ նրանց հետքով  
Մեր կտրիճն ե թռչում ողով,  
Տեսավ, զուգված վոսկով փայլուն,  
Սալթան արքան իր պալատում,  
Գահի վրա, թագը գլխին,  
Տխուր մի միտք իր ճակատին,  
Խորարարն ել ջուհակուճին,  
Կինարմատը՝ կին—ինամին,  
Թագավորի կողքին նստել,  
Հայացքներն են նրան հառել:  
Յեվ հյուրասեր Սալթան արքան  
Հյուրերի հետ նստեց սեղան,  
Հարցրեց:—Հյուրեր, իմ պարոնայք:  
Այդ վարտեղից, ինչպես յեկաք:  
Ծովի այն կողմ, լավ ե, թե վմտ:  
Յեվ ինչ հրաշք տեսաք անհայտ:—  
Նավորդները ի պատասխան,  
—Մենք աշխարհի ջուրջը անցանք,  
Ծովի այն կողմ վատ չե, տեսանք,  
Իսկ աշխարհում նոր մի հրաշք  
Կար գահավեժ կղզի ծովում,  
Վոչ-վոք վրան չեր բնակվում,  
Տափաստան եր նա ամայի,  
Յեվ մենավոր վրան կաղնի:  
Բայց կանգնած ե հիմա այնտեղ  
Նոր պալատով քաղաք ահեղ,  
Վոսկեգմբեթ յեկեղեցի,  
Յեվ ալգիներ շատ գեղեցիկ,  
Ուր Գվիդոնն ե տերը ջահել,

Նա բարե և քեզ ուզարկել:  
 Սալթան արքան շատ զարմացավ,  
 —Թե կենդանի մնամ, —ասավ,  
 Զքնաղ կղզին յես կալցելեմ  
 Յեզ Դվիդոնին հյուր կրինեմ:—  
 Խոհարարը, ջուլհակուհին,  
 Կինարմատը՝ կին—խնամին,  
 Զեն էամենում նրան, թողնել  
 Զքնաղ կղզին այն ալցելել:—  
 —Ի՞նչ հրաշք ե դա, վոր մի մհծ, —  
 Խոհարարը ալսպես ասեց,—  
 Աչքով արեց նա խորամանկ.  
 —Ծովի ափին կանգնած քաղաք:  
 Գիտցեք, ինչը դատարկ բան չի.  
 Մի անտառում կա յեղենի,  
 Տակը սկյուռը յերգ ե ասում,  
 Յեզ կաղին ե անվերջ կրծում:  
 Այդ կաղին ե վհչ հասարակ,  
 Վողջ կճեղը՝ վոսկի բարակ,  
 Իսկ միջուկը զմբուխտ անդին,  
 Ա՛յ թե հրաշք կասեն ինչին.  
 Զարմանում ե Սալթան արքան:  
 Կատաղում ե մոծակն ան,  
 Յեզ մորաքրոջ նստում աչքին,  
 Յեզ աջ աչքը խայթում կարգին:  
 Խոհարարը գույշն ե զցում,  
 Ուշաթափվում և կուրանում:  
 Քուր, ինամի և ծառաներ  
 Մոծակին են ուզում բռնել,  
 —Այ անիծված, անպետք մժեղ,

Հասեք, բռնեք՝ նրան այստեղ:—  
 Իսկ նա թռավ պատուհանից,  
 Իր յերկիրը հասավ նորից:  
 Ու իշխանը ծովի ափին  
 Ման ե գալիս տխուր կրկին:  
 Հանկարծ տեսավ հոսող ջրում  
 Այն կարապն ե աճերմակ լողում:  
 —Բարս, իշխան, չքնարդ ջահել  
 Դեմքիդ ինչու ամպ ե իջել,  
 Յեզ ինչու յես տխուր այդպես,—  
 Նա Գլիդոնին հարցրեց այսպես:  
 Ու իշխանը պատասխանեց.  
 —Միբատ ցավ ե կրծում մի մհծ,  
 Այն հրաշքը զարմանալի  
 Յես ունենալ կուզենայի:—  
 Մի անտառում կա յեղենի,  
 Սա հրաշք ե, դատարկ բան չի,  
 Սկյուռը տակին յերգ ե ասում,  
 Յեզ կաղին ե անվերջ կրծում:  
 Այդ կաղին ե վոչ հասարակ,  
 Վողջ կճեղը՝ վոսկի բարակ,  
 Իսկ միջուկը—զմբուխտ անդին,  
 Գուցե մարգիկ սուտ ասացին:—  
 Յեզ կարապն ե պատասխանում:  
 —Սկյուռի մասին ճիշտ են ասում,  
 Այդ հրաշքին ծանոթ եմ յիս,  
 Բավ ե, իշխան, ինչքան տխրես,  
 Յես պատրաստ եմ սիշտ ծառայել,  
 Քեզ բարեկամ ընդմիշտ լինել:—  
 Ու իշխանը քաջալերված,

Տուն և դառնում ուրախացած:  
 Բակը մտնում իր ընդարձակ.  
 Ի՞նչ ե տեսնում:—Յեղենու տակ  
 Մի սկզուռ և նստել փոքրիկ  
 Յեկ կաղին և կրծում վոսկի,  
 Միջից անգին զմբուխտ հանում  
 Յեկ կճեպն և նա հավաքում,  
 Կույտեր դարսում միատեսակ  
 Եղշոցով յերգում արագ,  
 Բոլոր ազնիվ մարդկանց առաջ.  
 — «Դու իմ այգի, բաղչա կանաչ»:  
 Քաջ Գվիդոնը շատ զարմացավ.  
 — Շնորհակալ եմ, — այսպես ասավ,  
 — Այ թե կարապ, կուզեմ, վոր նա,  
 Ինձ պես մի լավ ուրախանա:  
 Յեկ իշխանը սկը ուսի համար  
 Շինել տվեց տուն բյուրեղյա,  
 Մոտը պահակ նա կանգնեցրեց,  
 Յեկ գրագրին նա պատվիրեց,  
 Կաղինսերը հաշվել անթիվ,  
 Իրեն ոգուտ, սկյուռին՝ պատիվ:  
  
 Հզբոսնում և քամին ծովում,  
 Յեկ նավակն և առաջ քշում,  
 Վոր վազում և ջրով յերեր,  
 Բացած ձերմակ առագաստներ:  
 Անցնում կղզու ափից շատ մոտ,  
 Մեծ քաղաքի կողքով ծանոթ.  
 Թնդանոթն և սկսել կրակել,  
 Հրամայում և նավին կանգնել:

Յեկ հյուրերը կանգ են առնում,  
 Այն Գվիդոնն և նրանց կանչում,  
 Պատվիրում ե հյուրասիրել,  
 Հետո իրեն պատասխանել:  
 — Ի՞նչ եք, հյուրեր իմ, գուք ծախում,  
 Դեպի հուր եք հիմա լողում:—  
 Նավորդները ի պատասխան.  
 — Մեծ աշխարհի շուրջը անցանք,  
 Յեկ ծախեցինք մենք նժույգներ,  
 Դոն ազնիվ ձի—մատակներ.  
 Ժամանակն և մեր լրացել,  
 Կուզենք հեռու ճամբա ընկնել,  
 Կղզու մոտով այն հույանի,  
 Դեպ յերկիրը քաջ Սալթանի:  
 Ու իշխանը ասաց, — հիմա,  
 Զեկ պարոնայք, բարի ճամբա,  
 Ովկիանոսով, կապույտ ծովով,  
 Մինչ Սալթանը ձեր փառավոր.  
 Քեզ Գվիդոնը, ասեք, այսոր՝  
 Բարեում և Սալթան հզոր:  
  
 Գլուխ տալով քաջ իշխանին,  
 Նրանք ճամբա ընկան կրկին,  
 Իսկ իշխանը ափն և վաղում,  
 Ուր կարապն և արդեն լողում,  
 Յեկ խնդրում ե՝ — հոգիս նորից  
 Դեպ հեռուն և ձգտում անից:—  
 Ու կարապը նրան իսկուն  
 Ծովի ջրով ցողեց փայլուն:  
 Յեկ իշխանը դարձավ մի ճանձ,

Թուավ, գնաց ճամբով ճանաչ,  
Ծովով թուավ և յերկնքով,  
Նավի ճեղքը մտավ շուտով:

Աղմկում ե ուրախ քամին,  
Յել նավակն ե վաղում կրկին,  
Կղզու մոտով այն Բույանի,  
Դեպ յերկիրը քաջ Սալթանի:  
Յեվ յերկիրն այն յերազած՝  
Հեռուներում պարզ յերեաց:  
Ափը իջան հյուրերն ախ.  
Հրավիրում ե նրանց արքան.  
Մինչև պալատ նրանց հետքով  
Մեր կտրիճն ե թոչում ողով.  
Տեսավ, զուգված վոսկով փայլուն,  
Սալթան արքան իր պալատում,  
Գահի վրա, թագը գլխին,  
Տխուր մի միտք իր ճակատին.  
Զուլհակուհին, կին—ինամին,  
Խոհարարը՝ մի աչքանին  
Կողքին նստել թագավորի,  
Նմանվում են դոդոշների:  
Յել հյուրասեր Սալթան արքան  
Հյուրերի հետ նստեց սեղան,  
Հարցրեց.—Հյուրեր, իմ պարոնայք,  
Այդ վժրտեղից, բնչպես յեկաք,  
Ծովի այն կողմ լավ ե, թե վատ,  
Յել ինչ հրաշք տեսաք անհայտ—  
Նավորդները ի պատասխան.  
—Մենք աշխարհի շուրջը անցանք,

Վատ չե, ծովի այն կողմ տեսանք,  
Իսկ աշխարհում, նոր մի հրաշք,  
Ծովում կղզի կա մեն-մենակ,  
Կղզու վրա, մի մեծ քաղաք,  
Վոսկեգմբեթ յեկեղեցի  
Յել դղյակներ շատ գեղեցիկ:  
Պալատի գեմ—իեղենու ծառ,  
Տակը—բյուրեղ տնակ պայծառ,  
Մեջը սկյուռ մի ընտանի  
Յեկ սրամիտ, և կենդանի:  
Նա յերգեր և սիրուն յերգում  
Յեվ կաղին և անվերջ կրծում:  
Այդ կաղինը չե հասարակ,  
Վողջ կճեպը—վոսկի բարակ,  
Իսկ միջուկը—զմբուխո կանաչ,  
Յեվ ծառաներ նրա առաջ՝  
Ծառայում են նրան վայել:  
Գրագրին են այնտեղ հանձնել,  
Կաղինները հաշվել անգին:  
Մեծարում ե զորքն սկյուռին.  
Կճեպներից գրամ են ձուլում,  
Վոր աշխարհն ե շրջագալում.  
Յել զմբուխոն են ածում պահում,  
Աղջիկները մառաններում:  
Այնտեղ, հարուստ կղզու վրա  
Պալատներ են, խրճիթ չկա,  
Ուր Գվիդոնն ե—տերը ջահել,  
Նա բարե ե քեզ ուղարկել.—  
Սալթան արքան շատ զարմացավ.  
—Թե կենդանի մնամ,—ասավ,

— Զքնաղ կղղին յես կայցելեմ,  
 Յեվ Գվիդոնին հյուր կլինեմ:—  
 Խոհարերը, ջուլհակուհին,  
 Կինարմատը՝ կին խնամին,  
 Չեն կամենում նրան թողնել,  
 Զքնաղ կղղին այն այցելել:  
 Գաղտագողի ծիծաղելով,  
 Ջուլհակուհին ասալ, — հրաշքով  
 Չես զարմացնի դու մեղ իսկի,  
 Սկյուռը քար ե կրծում վոսկի,  
 Թափում վոսկին այն շահաբեր,  
 Զմբուխտներից դիզում կույտեր,  
 Չես զարմացնի դրանով դու մեղ  
 Ճշմարտություն, թե սուստ ասես:  
 Հրաշք կա ուրիշ, զարմանալի,  
 Ծովն ե ուռչում փոթորկալի,  
 Յեռ ե գալիս, ուժեղ վոռնում,  
 Դատարկ ափի մրա ցատկում,  
 Տարածվում ե շառաչելով,  
 Յեվ մնում ե ափին շուտով,  
 Պատյաններով բոցավառվող  
 Յերեսուն յերեք կտրիճ քայլող:  
 Դլուցազներ են զողջը սիրուն,  
 Հսկաներ են ջահել, նախշուն,  
 Քնտիր հասակ, միատեսակ,  
 Յեվ հետները քաջ, համարձակ,  
 Սևածովը՝ քեռին նրանց,  
 Ա՛յ քեզ հրաշք չտեսնված:—  
 Յեվ հյուրերն են խելոք լոել,  
 Չեն ել ուզում հակաճառել:

Զարմացել ե Սալթան արքան,  
 Կատաղում ե Գվիդոնն այն,  
 Մորաքրոջն ե հասնում տղղում  
 Յեվ ձախ աչքի վրա նստում:  
 Գուցնը կորցրեց ջուլհակուհին,  
 Յեվ կուրացավ նույն վայրկյանին:  
 Շուրջը աղմուկ, — բռնիր, բռնիր...  
 Դե շուտ ճիմիր, դրան սպանիր,  
 — Այ թե յես քեզ, սպասիր... — Նորից  
 Քաջ իշխանը պատուհանից  
 Թռավ հասավ յերկիրը իր,  
 Կապույտ ծովով անձայրածիր:  
 Ու իշխանը ծովի ափին  
 Ման ե գալիս տխուր կրկին:  
 Հանկարծ տեսավ, հոսող ջրում,  
 Այն կարապն ե ճերմակ լողում:  
 — Բարե՛, իշխան, չքնաղ ջահել,  
 Ինչն դեմքիդ ամպ ե իջել,  
 Յեվ ինչն յես տխուր ալդպես:—  
 Նա Գվիդոնին հարցրեց այսպես:  
 Ու իշխանը պատասխանեց:  
 — Սիրտս ցավ ե կրծում մի մեծ,  
 Այն հրաշքը հիանալի  
 Իմ յերկրում կուզեմ լինի:  
 — Ի՞նչ հրաշք ե զարմանալի:  
 — Անդ ուռչում ե փոթորկալի  
 Ովկիանը, ուժեղ վոռնում,  
 Պատարկ ափի վրա ցատկում,  
 Տարածվում ե շառաչելով,  
 Յեվ մնում են ափին շուտով,

Պատյաններով բոցավառվող,  
 Յերեսուն յերեք կտրիճ քայլող,  
 Դյուցազներ են վողը սիրուն:  
 Հսկաներ են ջահել, նախշուն:  
 Միահասակ, —նրանց կողքին,  
 Սևածովը՝ ծերուկ քեռին:  
 Յեկ կարապն ե պատասխանում.  
 —Անա թե քեզ ինչն ե հուզում,  
 Մի մտածի, դու իմ հոգյակ,  
 Այդ հրաշքին յես եմ տեղյակ.  
 Դյուցազները —ծովի ազատ,  
 Յեղբայրներն են իմ հարազատ:  
 Գնա, իշխան, ել մի տիրիի,  
 Յեղբայրներիս քեզ մոտ սպասիր,  
 Յեկ իշխանը հանդարտ քայլեց,  
 Աշտարակի գլխին նստից,  
 Ծովին սկսեց նայել անփուլթ...  
 Ծփաց հանկարծ ծովը կապույտ,  
 Աղմկելով նա տարածվեց,  
 Հասավ ափին, վրան թողեց  
 Յերեսուն յերեք կտրիճ քայլող,  
 Պատյաններով բոցավառվող:  
 Հսկաներն են զույգ-զույգ քայլում.  
 Յեկ ալեգարդ մազով փայլուն  
 Ծեր քեռին ե առաջնորդում,  
 Դեպի քաղաք նրանց տանում:  
 Քաջ Գվիդոնը իջավ, շտապեց,  
 Իր հյուրերին դիմավորեց:  
 Ժողովուրդն ե նույնպես վազում,

Իշխանին ե քեռին ասում.  
 —Մեզ կարապն ե այն ուղարկել  
 Յեկ այսպես ե խիստ հրամայել  
 Պերճ քաղաքը քո պահպանել  
 Երջագայէլ մի լավ հսկել  
 Այսուհետև մենք ամեն որ,  
 Միշտ միասին, ճամբով սովոր,  
 Պարսպի մոտ, ծովի միջից  
 Դուրս ենք գալու մենք ջրերից:  
 Կտեսնվենք մենք շատ շուտով,  
 Ժամն ե ծովը իջնել խմբով.  
 Ծանր ե ոդը մեզ յերկրի...  
 Յեկ տուն դարձան նրանք կրկին:  
 Լզրունում ե քամին ծովում  
 Յեկ նավակն ե առաջ քշում,  
 Նա վազում ե ջրով յերեր,  
 Պարզած ձերմակ առագաստներ:  
 Անցնում կղզու ափից շատ մոտ,  
 Մեծ քաղաքի կողքով ծանոթ.  
 Թնդանոթն ե սկսել կրակել,  
 Հրամայում ե նավին կանգնել:  
 Յեկ հյուրերը կանգ են առնում,  
 Այն Գվիդոնն ե նրանց կանչում,  
 Պատվիրում ե հյուրասիրել  
 Հետո իրեն պատասխանել.  
 —Ի՞նչ եք, հյուրեր իմ, դուք ծախում,  
 Դեպի մուր եք հիմա լողում:—  
 Նավորդները ի պատասխան.  
 —Մենք աշխարհը անցանք, տեսանք,  
 Յեկ ծախեցինք փայլուն պողպատ,

Դեղին վոսկի, մաքուր արծաթ.  
Ժամանակն ե մեր լրացել,  
Կուզենք հեռու ճամբա ընկնել,  
Կղղու մոտով այն Բույանի,  
Դեպ յերկիրը քաջ Սալթանի:  
Ու իշխանը ասաց.—հիմա,  
Չեղ, պարոնայք, բարի ճամբա,  
Ովկիանոսով, կապույտ ծովով,  
Մինչ Սալթանը ձեր փառավոր:  
—Քեղ, Գվիդոնը, ասեք նրան,  
Բարեռում ե, զորեղ Սալթան...

Գլուխ տալով քաջ Գվիդոնին,  
Նրանք ճամբա ընկան կրկին:  
Իսկ իշխանը ափն ե վազում,  
Ուր կարապն ե արգեն լողում,  
Յեղ խնդրում ե՝ հոգիս նորից  
Դեպի հեռուն ե ձգուում տնից:—  
Ու կարապը նրան իսկույն  
Ծովի ջրով ցողեց փայլուն:  
Այստեղ նորից նա փոքրացավ,  
Իշմեղու հանկարծ դարձավ,  
Հետո թուավ և տղտղաց,  
Նավին հասավ, իջավ նա ցած,  
Նավախելի վրա նստեց  
Յեղ ծակի մեջ նա թագնվեց:  
Աղմկում ե ուրախ քամին,  
Յեղ նավակն ե վազում կրկին,  
Կղղու մոտով այն Բույանի,

Դեպ յերկիրը քաջ Սալթանի:  
Յեղ յերկիրը, այն յերազանք՝  
Հեռուներում պարզ յերեաց:  
Ափն իջան հյուրերն այն, ՝  
Հրավիրում ե նրանց արքան,  
Մինչեւ պալատ նրանց հետքով,  
Մեր կտրին ե թռչում ողով:  
Տեսավ, զուգված վոսկով փալլուն,  
Սալթան արքան իր պալատում,  
Գահի վրա՝ թագը գլմին,  
Տիուր մի միտք իր ճակատին:  
Խոհարարը, ջուհակուհին,  
Կինարմատը՝ կին—խնամին,  
Թագավորի կողքին նստել,  
Յերեքովը չորս աչք ունեն:  
Յեղ հյուրասեր Սալթան արքան  
Հյուրերի հետ նստեց սեղան:  
Հարցրեց, —հյուրեր, իմ պարոնայք,  
Այդ վհրաեղից, ինչպես յեկաք,  
Ծովի այն կողմ լավ ե, թթ վատ,  
Յեղ ինչ հրաշք տեսաք անհայտ:—  
Նավորդները ի պատասխան.  
—Մենք աշխարհի շուրջը անցանք,  
Վատ չե ծովի այն կողմ տեսանք,  
Իսկ աշխարհում—նոր մի հրաշք,  
Ծովում կղզի կա մեն-մենակ,  
Կղզու վրա մի մեծ քաղաք,  
Անտեղ հրաշք զարմանալի,  
Ծովի ե ուռչում փոթորկալի,  
Յեռ ե գալիս, ուժեղ վոռնում,

Դեղին վոսկի, մաքուր արծաթ.  
Ժամանակն ե մեր լրացել,  
Կուղենք հեռու ճամբա ընկնել  
Կղզու մոտով այն Բույանի,  
Դեպ յերկիրը քաջ Սալթանի:  
Ու իշխանը ասաց,—հիմա,  
Զեզ, պարոնայք, բարի ճամբա,  
Ովկիանոսով, կապույտ ծովով,  
Մինչ Սալթանը ձեր փառավոր:  
—Քեզ, Գվիդոնը, ասեք նրան,  
Բարեռում ե, գորեղ Սալթան...

Գլուխ տալով քաջ Գվիդոնին,  
Նրանք ճամբա ընկան կրկին:  
Իսկ իշխանը ափն ե վազում,  
Ուր կարապն ե արգեն լողում,  
Յեզ ինդրում ե՝ հոգիս նորից  
Դեպի հեռուն ե ձգտում տնից:—  
Ու կարապը նրան իսկույն  
Ծովի ջրով ցողեց փայլուն:  
Այստեղ նորից նա փոքրացավ,  
Իշամեղու հանկարծ դարձավ,  
Հետո թռավ և տղտղաց,  
Նավին հասավ, իջավ նա ցած,  
Նավախելի վրա նստեց  
Յեզ ծակի մեջ նա թագնվեց:

Աղմկում ե ուրախ քամին,  
Յեզ նավակն ե վազում կրկին,  
Կղզու մոտով այն Բույանի,

Դեպ յերկիրը քաջ Սալթանի:  
Յել յերկիրը, այն յերազած՝  
Հեռուներում պարզ յերեաց:  
Ափն իջան հուրերն այն,  
Հրավիրում ե նրանց արքան,  
Մինչե պալատ նրանց հետքով,  
Մեր կտրիմն ե թռչում ողով:  
Տեսավ, զուգված վոսկով փայլուն,  
Սալթան արքան իր պալատում,  
Գահի վրա՝ թագը գլխին,  
Տիուր մի միտք իր ճակատին:  
Խոհարարը, ջուկակուհին,  
Կինարմատը՝ կին—խնամին,  
Թագավորի կողքին նստել,  
Յերեքովը չորս աչք ունեն:  
Յեզ հյուրասեր Սալթան արքան  
Հյուրերի հետ նստեց սեղան:  
Հարցը ից, —հյուրեր, իմ պարոնայք,  
Այդ վհրատեղից, ինչպես յեկաք,  
Ծովի այն կողմ լմկ ե, թե վատ,  
Յեզ ինչ հրաշք տեսաք անհայտ:—  
Նավորդները ի պատասխան.  
—Մենք աշխարհի շուրջը անցանք,  
Վատ չե ծովի այն կողմ տեսանք,  
Իսկ աշխարհում նոր մի հրաշք,  
Ծովում կղզի կա մեն-մենակ,  
Կղզու վրա մի մեծ քաղաք,  
Այստեղ հրաշք զարմանալի,  
Ծովին ե ուռչում փոթորկալի,  
Յեզ ե գալիս, ուժեղ վոռնում,

Պատարկ ափի վրա ցատկում  
 Տարածվում ե շառաչելով,  
 Յեզ մնում են ափին շուտով  
 Յերեսուն յերեք կտրիճ քայլող,  
 Պատյաններով վոսկի—վառվող.  
 Դյուցագներ են վողը սիրուն,  
 Հոկաներ են ջահել, նախշուն,  
 Միահասակ,—սրանց կողքին,  
 Սեածովը՝ ծերուկ քեռին  
 Դուրս ե գալիս ծովից յեռուն,  
 Նրանց զույգ-զույգ ափն ե սերում,  
 Վոր պահպանեն նրանք կղզին  
 Յեզ շուրջ բոլոր հոկեն կարգին:  
 Զկա այդպես վստանելի,  
 Քաջ, ջանասիր զորք ավելի:  
 Անդ Գվիդոնն ե տերը ջահել,  
 Նա բարե ե քեզ ուղարկել:—  
 Սալթան արքան շատ զարմացավ,  
 —թե կենդանի մնամ, —ասավ,  
 Զքնազ կղզին յես կայցելեմ,  
 Յեզ Գվիդոնին հյուր կլինեմ:—  
 Խոհարարը, զուլհակուհին,  
 Վոչինչ չաւին, —իսկ ինամին  
 Թմծիծաղով ասավ այսպես.  
 —Զեք զարմացնի զրանով դուք մեզ,  
 Վոր մարդիկ են ծովից յելնում  
 Յեզ շուրջ բոլոր այնտեղ հսկում:  
 Ճիշտ են ասում, թե սուտ խոսում,  
 Այստեղ հրաշք յես չեմ տեսնում,  
 Կա մի հրաշք մեր աշխարհում,

Ճիշտ լուրեր են միշտ պտտվում:  
 Ծովի ալն կողմ կա զշխուհի,  
 Աչքը իսկի, չես հեռացնի,  
 Լույսն ե որվա խավարեցնում,  
 Նա գիշերն ե լուսավորում:  
 Ծամի տակին փայլուն լուսնյակ,  
 Իսկ ճակատին ասող—արեգակ  
 Իրեն այնպես վեհ ե պահում,  
 Սիրամարգ ե կարծես քայլում,  
 Իսկ ինչպես ե ասում, խոսում,  
 Գետն ե կարծես մեղմիկ հոմում:  
 Կարելի յե ասել—հրաշք:  
 Չտեսնված այ ձեզ զարմանք:  
 Յեզ հյուրերն են խելոք լուել  
 Զեն ել ուզում հակածառել:  
 Զարմանում ե արքան կրկին,  
 Կատաղում ե արքայորդին,  
 Բայց խղճալով իր տատիկին,  
 Ել չի նստում նրա աչքին,  
 Այլ տղղում ե և պտտվում,  
 Քթի վրա ուղիղ նստում,  
 Քիթն ե խայթում:—Մեկ ել ահա,  
 Մի մեծ բարիկ քթի վրա:  
 Յեզ գոռում են վողջ ահաբեկ.  
 —Ի սեր ասածն, շուտով ոգնեք,  
 —Հեյ, պահակներ, բռնեք շուտով,  
 Դե, ճիւլցեք դրան վոտքով,  
 —Ա՛յ քեզ, սպասիր:—Պատուհանից  
 Իշամեղուն թուավ նորից,  
 Իր յերկիրը հասավ շուտով,

Դնաց, անցավ կապույտ ծովով:  
Ու իշխանը ծովի ափին  
Ման ե գալիս տխուր կրկին:  
Հանկարծ տեսավ, հոսող ջրում,  
Այն կարապն ե ճերմակ լողում:  
—Բարե, իշխան, չքնաղ, ջահել,  
Ինչու դեմքիդ ամպ ե իջել,  
Յեվ ինչու յես ախուր այդպես,—  
Նա Գվիգոնին հարցրեց այսպես:  
Ու իշխանը պատասխանեց.  
—Սիրտս ցավ ե կրծում մի մեծ,  
Վոր բոլորն են ամուսնանում,  
Յես եմ մենակ այսպես մնում:—  
—Իսկ դու զժուցե մեկին դիտես, —  
—Աշխարհումս կա մի այնպես,  
Արքայադուստր գեղեցկուհի,  
Վորից շշքդ չես հեռացնի,  
Լույսն ե որվա խավարեցնում,  
Յեվ գիշերն ե լուսավորում:  
Ծամի տակին փայլուն լուսնակ,  
Իսկ ճակատին աստղ—արեգակ:  
Իրեն այնուես վեհ ե պահում,  
Սիրամարդ ե կարծես քայլում:  
Իսկ ինչպես ե ասում, խոսում,  
Գետն ե կարծես մեղմիկ հոսում:  
—Այդ բոլորը ձի՞շտ ե, ասա, —  
Պատասխանին սպասում ե նա:  
Յեվ կարապն ե ճերմակ լուել,  
Հետո սկսեց այսպես խոսել:  
—Կա այդպիսի աղջիկ, իշխան

Բայց ձեռնոց չի կինը՝ նրան  
Ճերմակ ձեռքից գեն չես գցի,  
Գոտու յետև խո չես թագցնի:  
Կծառայեմ քեզ խորհուրդով.  
Լսիր, հասիր վողջին մտքով,  
Լավ խելք արա, իշխան, կրկին,  
Վոր չըղդմաս հետո իսկի:—  
Յեվ իշխանը սկսեց յերդվել  
Վոր ուղում և նա պսակվել,  
Վոր նա արդեն սրա մասին  
Մատածել ե ճանապարհին,  
Վոր պատրաստ ե նա մոլեգին,  
Այն դշխուհու համար անդին,  
Գնալ վոտքով, վինառել հեռու,  
Յոթ սարերի յետևներում:  
Իսկ կարապը խոր ախ քաշեց.  
—Ինչու հեռուն—նրան ասեց,—  
—Գիտցիր, մոտ ե բաղդդ այնքան,  
Այն դշխուհին յես եմ, իշխան:—  
Նա թեկը թափահարեց.  
Ալիքների մոտով սահեց,  
Ափը իջավ վերից ահա,  
Թփերի մեջ մտավ անահ.  
Թպրաւով թափահարվեց,  
Յեվ դշխուհի դարձավ, վոխվեց.  
Ծամի տակին փայլուն լուսնյակ,  
Իսկ ճակատին աստղ—արեգակ:  
Իրեն այնպես վեհ ե պահում,  
Սիրամարդ ե կարծես քայլում:  
Իսկ ինչպես ե ասում, խոսում,

Գետն և կարծես մեղմիկ հոսում:  
 Ու իշխանն և նրան գրկում,  
 Ճերմակ կրծքին ամուր սեղմում.  
 Հետո ձեռքից նրա բռնում,  
 Իր մայրիկի մոտ և բերում,  
 Յեվ վատքերն և ընկնում խնդրում,  
 Աղջելով հեղ՝ հնազանդ,  
 — Դռւ, տիրունի, մայր հարազատ,  
 Կին եմ ընտրել յես ինձ համար,  
 Քեզ ել՝ աղջիկ լսող հարժար:  
 Մենք խնդրում ենք, վոր գուռ որհնես,  
 Յերկուսիս ել թույլ տաս դու մեղ,  
 Ապրել սիրով և միասին,  
 — Դե մեղ որհնի, — նրան ասին:  
 Յեվ հնազանդ գլխի վրա  
 Սրբապատկեր վերցրած ահա,  
 Մայրն և լալիս, ասում. — Վարդիք,  
 Աստված կյանքում կվարձատրի: —  
 Քաջ իշխանը ել չսպասեց,  
 Նա դշխուհու հետ սպակվեց.  
 Յեվ ապրեցին նրանք սիրով  
 Նորածնի սպասելով:  
 Հզրունում ե քամին ծովում,  
 Յեվ նավակն ե առաջ քշում,  
 Վոր վաղում ե ջրով յերեր,  
 Բացած ձերմակ առագաստներ:  
 Անցնում կղզու ափից զատ մոտ,  
 Մեծ քաղաքի կողքով ծանոթ.  
 Թնդանոթն ե սկսել կրակել,

Հրամայում ե նավին կանգնել,  
 Յեվ հյուրերը կանգ են առնում,  
 Այն Գվիդոնն ե նրանց կանչում,  
 Պատվիրում ե հյուրասիրել  
 Հետո իրեն պատասխանել.  
 — Ի՞նչ եք, հյուրեր իմ, դուք ծախում,  
 Յեվ դեպի մեր հիմա լողում:  
 Նավորդները ի պատասխան.  
 — Մենք աշխարհը անցանք, տեսանք,  
 Ուր ծախեցինք ամեն տեսակ  
 Յեվ անքանակ անհայտ ավրանք:  
 Ժամանակն ե մեր լրացել,  
 Կուզենք հեռու ճամբար ընկնել  
 Կղզու մոտով այն Բույանի,  
 Դեպ յերկիրը քաջ Սալթանի:  
 Ու իշխանը ասաց. — Հիմա,  
 Զեզ, պարոնայք, բարի ճամբար,  
 Ովկիանոսով, կապույտ ծովով,  
 Մինչ Սալթանը ձեր փառավոր:  
 Բայց հիշեցրեք նրան միայն,  
 Թագավորին ձեր անհման,  
 Խոստացել ե մեղ այցելել  
 Բայց մինչ այժմ նա չի յեկել:  
 Բարեհցեք ինձնից նրան: —  
 Յեվ հյուրերին այս մեկ անգամ  
 Քաջ Գվիդոնը չհետեւց,  
 Իր կնոջից չբաժանվեց:  
 Աղմկում ե ուրախ քամին  
 Յեվ նավակն ե վաղում կըկին,  
 Կղզու մոտով այն Բույանի,

Դեպ յերկիրը քաջ Սալթանի:  
Յեվ յերկիրը այն յերազած՝  
Հեռուներում պարզ յերեաց:  
Ափը իջան հյուրերն այն,  
Հրավիրում ե նրանց արքան:  
Տեսան, զուգված թագով փայլուն  
Սալթան արքան իր պալատում,  
Խոհարաբն եւ, ջուլհակուհին,  
Կինարմատը՝ կին—խնամին,  
Թագավորի կողքին նստել,  
Յերեքովը՝ չորս աչք ունեն,  
Յեվ հյուրասեր Սալթան արքան  
Հյուրերի հետ նստեց սեղան:  
Հարցրեց—Հյուրեր, իմ պարոնայք,  
Ալդ վմբարեղից՝ ինչպես յեկաք.  
Ծովի այն կողմ լավ ե, թե վատ,  
Յեվ ի՞նչ հրաշք տեսաք անհայտ:—  
Նավորդները ի պատասխան.  
—Մենք աշխարհի շուրջը անցանք,  
Վատ չե ծովի այն կողմ տեսանք,  
Իսկ աշխարհում նոր մի հրաշք՝  
Ծովում կղզի կա մեն-մենակ,  
Կղզու վրա մի մեծ քաղաք,  
Վոսկեգմբեթ յեկեղեցի:  
Յեվ ալգիներ շատ գեղեցիկ:  
Պալատի դեմ յեղենու ծառ,  
Տակը բյուրեղ տնակ պայծառ,  
Մեջը սկլուռ մի ընտանի,  
ՅԵՎ սրամիտ, և՛ կենդանի:  
Նա յերգեր ե սիրուն ասում

ՅԵՎ կաղին ե անվերջ կրծում:  
Իսկ կաղինը չե հասարակ,  
Վողջ կճեպը՝ վոսկի բարակ,  
Իսկ միջուկը—զմբռւխու կանաչ,  
ՅԵՎ ծառաներ նրա առաջ:  
Ուրիշ հրաշք զարմանալի՝  
Անդ ուռչում ե փոթորկալի,  
ՅԵՎ ե գալիս ծովը, վոռնում,  
Դատարկ ափի վրա ցատկում,  
Տարածվում ե արագ վազքով,  
ՅԵՎ մնում են ափին շուտով,  
Պատյաններով բոցավառվող,  
ՅԵՐԵՍՈՒՆ յերեք կտրիճ քայլող,  
Դյուցազներ են նրանք սիրուն,  
Հսկաներ են ջահել, նախշուն,  
Միահասակ, —նրանց կողքին  
Սկածովը՝ ծերուկ քեռին:  
Զա այդպես վստահելի,  
Քաջ, ջանասեր զորք ավելի,  
Իսկ իշխանը մի կին ունի,  
Աչքը իսկի չես հեռացնի:  
Լույսն ե որվա խավարեցնում,  
Նա գշերն ե լուսավորում,  
Ծամի տակին փայլուն լուսնյակ,  
Իսկ ձակատին աստղ—արեգակ:  
Անդ Գվիդոնն ե տերը ջահել,  
Մեծարում են նրան վայել:  
Ուզարկում ե նա քեզ բարե,  
Նախատում ե նա քեզ թեթե,  
—Խոստացել ե մեզ ալցելել,

Բայց գեռ մեղ մոտ նա չի չեկել—  
Արքան այստեղ չհամբերեց,  
Նավատորմը իր պատրաստեց:  
Խոհարարն եւ, ջուլհակուհին,  
Կինարմատը՝ կին—խնամին  
Չեն կամենում նրան թողնել,  
Չքնաղ կզգին այն այցելել:  
Սալթան արքան ուշ չի դարձնում  
Յեվ այսպես եւ նրաց զսպում.  
—Յես արքա յեմ, թե յերեխա,  
Նա ասում եւ լուրջ ու վստահ.  
—Յես մեկնում եմ,—վոտքով դոփեց:  
Յեվ գուրս յեկավ, գուրս խփեց:

Քաջ Գվիդոնն եւ տանը նստել,  
Ըսկսել եւ ծովին նայել,  
Վոր հանդարա եւ և չի հուզվում,  
Թփրտում եւ, \*մեղմիկ ծփում:  
Իսկ լազուրե հեռուներում  
Մեծ նավատորմ եւ յերեսում.  
Ովկիանոսում նավեր քանի,  
Նավատորմն եւ այդ Սալթանի:  
Յեվ Գվիդոնը տեղից թռավ,  
Բարձր ձայնով կանչեց ասավ.  
—Մայր հարազատ, դու իմ ահել,  
Իշխանուհի դու ել ջահել,  
Շուտով նայեք, տեսեք այստեղ,  
Իմ հալրիկն եւ գալիս այստեղ:—  
Նավատորմն մոտ եւ կղզուն  
Նա դիտակով հորն եւ նայում:

Հայրն եւ կանգնել նավին ահա,  
Յեվ նայում եւ իրենց վրա.  
Հետոն են յեկել ջուլհակուհին,  
Խոհարարը և խնամին:  
Յեվ բոլորն են շատ դարձանում,  
Յերբ յերկիրն են անհայտ տեսնում:  
Կրակում են թնդանոթից,  
Զիլ զողանջներ դանդատունից:  
Թաչ Գվիդոնը ափն եւ իջնում  
Յեվ արքային դիմավորում,  
Հետը յեկած ջուլհակուհուն,  
Խոհարարին և խնամուն:  
Թաղաք տարավ նա արքային  
Յեվ չխոսեց ամենեին:

Դեպ պալատ են նրանք գիմում:  
Դարպասի մոտ զրահով փայլուն,  
Արքայի գեմ, քաջ, անվհեր,  
Յերեսուն յերեք հրաշք զյուցաղներ:  
Կորիճներ են վողջը սիրուն,  
Հսկաներ են ջահել նախշուն:  
Միահասակ.—Նրանց կողքին  
Սեածովը՝ ծերուկ քեռին:  
Յերբ լայն բակը արքան մտավ,  
Մեծ յեղենի այնաեղ տեսավ,  
Տակը սկյուռն յերգ եւ ասում  
Յեվ կաղին եւ վոսկի կըծում:  
Միջից կանաչ զմբուխտ հանում,  
Պարկի մեջ եւ ալն հավաքում:  
Յեվ շուրջ բոլոր այն մեծ բակում,

Թափած կճեալ վոսկի, փայլուն:  
Մեկ ել հանկարծ ուրիշ հրաշք,  
Իշխանուհի իսկ մի զարմանք,  
Ծամի տակին փալուն լուսնյակ,  
Իսկ ճակատին աստղ—արեգակ:  
Իրեն այնպես վեհ ե պահում,  
Սիրամարգ ե կարծես քայլում.  
Սկեսուրին ե առաջնորդում,  
Չեռքից բռնած սենյակ բերում:  
Ճանաչում ե նրան արքան,  
Բարախում ե սիրտն արագ,  
—ի՞նչ եմ տեսնում, այ քեզ զարմանք.  
—ի՞նչպես,—շունչն ե հազիվ պահում,  
Լաց ե լինում և արտասվում,  
Թագուհուն ե սեղմում կրծքին,  
Վորդու հետ ել ջահել հարսին:  
Յերբ նստեցին սեղան մեկտեղ,  
Սկսվեց մի քեֆ ուրախ այնտեղ:  
Խոհարաբն ել ջուլհակուհին,  
Կինարմատը՝ կին—խնամին  
Թագնվել են անկյուններում,  
Հազիվ գտան նրանց մթնում:  
Այստեղ նրանք բոլորն ասին  
Յեկ լաց յեղան, մեղանչեցին:  
Բակ այս անգամ ուրախ արքան  
Նրանց թողեց, վոր տուն դառնան:  
Որը անցավ—և Սալթանին  
Կիսահարբած քնացրեցին:  
Այնտեղ յես ել շատ խմեցի,  
Միայն բեխս թաթախեցի:

ՀԵՐՑԵՍԹ ԶԱՆԳՐԻ ԵՎԱ, ԶԱՆԳԻ ՄԱՍԻՆ  
1833

Թափած կճեպ վոսկի, փայլուն:  
Մեկ ել հանկարծ ուրիշ հրաշք,  
Իշխանուհի իսկ մի զարմանք,  
Ծամի տակին փայլուն լուսնյակ,  
Իսկ ճակատին աստղ—արեգակ:  
Իրեն այնպես վեհ եւ պահում,  
Սիրամարդ ե կարծես քայլում.  
Սկեսուրին ե առաջնորդում;  
Չեռքից բռնած սենյակ բերում:  
Ճանաչում ե նրան արքան,  
Բարախում ե սիրտն արագ,  
—ի՞նչ եմ՝ տեսնում, այ քեզ զարմանք.  
—ի՞նչպես,—շունչն ե հազիվ պահում,  
Լաց ե լինում ե արտասվում,  
Թագուհուն ե սեղմում կրծքին,  
Վորդու հետ ել ջահել հարսին:  
Յերբ նստեցին սեղան մեկտեղ,  
Սկսվեց մի քեփ ուրախ այնտեղ:  
Խոհարարն ել ջուրհակուհին,  
Կինարմատը՝ կին—ինամին  
Թագնվել են անկյուններում,  
Հազիվ գտան նրանց մթնում:  
Այստեղ նրանք բոլորն ապին  
Յեվ լաց յեղան, մեղանչեցին:  
Բայց այս անգամ ուրախ արքան  
Նրանց թողեց, վոր տուն դառնան,  
Որը անցավ—և Սալթանին  
Կիսահարբած քնացրեցինք  
Այնտեղ յես ել շատ խմեցի,  
Միայն բեխս թաթախեցի:

ՀԵՐԵՍԹ ԶԱՆՈՐՍԻ ԵՎԱ, ԶԵՆԻՒՆԻ ՄԱՍԻՆ

1833

Մի ծերուկ ձկնորս և կինը պառակ  
Բնակվում եյին կապույտ ծովի մոտ.  
Այսպես հողաշեն մի հին տնակում  
Յերեսուն-յերեք տարի ապրեցին:  
Ծերուկը ցանցով միշտ ծուկ եր բռնում,  
Պառազն ել նստած իր թելն եր մանում:  
Ծերուկը մի որ ծովը ցանց ձգեց,  
Ցանցը դուրս յեկավ, լեփ լեցուն տիղմով—  
Նա ցանցը մեկ ել ծովի մեջ ձգեց,  
Ցանցը դուրս յեկավ ծովային խոտով.  
Նա յերբորդ անգամ ցանցը ծով ձգեց,  
Ցանցը ափ հանեց մի փոքրիկ ձկնիկ.  
Վոչ թե հաւարակ, այլ վոսկի ձկնիկ:  
Ձկնիկը վոսկի սկսեց խոսել,  
Մարդկային լեզվով այսպես աղերսել—  
— Թող, դու ալեռ, ինձ ծովը նորից,  
Թանկադին փրկանք քեզ կվճարեմ,  
Ինչ սիրտդ ուզի, կտամ փոխարեն:  
Ծերը զարմացավ, սաստիկ վախեցավ,  
Յեռեսունյերեք նա տարվա ձկնորս,  
Զեր լսել յերեք, վոր ծուկը խոսի.  
Յեկ նա աղատեց վոսկի ձկնիկին,  
Յեկ հետը խոսեց այսպես սիրալիր—  
— Տեր աստված քեզ հետ, իմ վոսկի ձկնիկ,  
Քո փրկանքն ինձ իսկի պետք ել չի,

Գնա քեզ համար դու ծովը կապույտ,  
Զբերում լողա ազատ և անփուչթ,

Ծերը տուն դարձավ պառավ կնոջ մոտ:  
Հրաշքի մասին պատճեց պառավին,  
— Այսոր վորսացի յես փոքրիկ ձկնիկ,  
Վոչ թե հասարակ, այլ վոսկի ձկնիկ,  
Ռւդիդ մեր լեզվով ձկնիկն եր խոսում,  
Նա խնդրում եր ինձ թողնեմ կապույտ ծով,  
Խոստանում եր ինձ թանկագին փրկանք,  
Ինչ սիրտս ուզի տալիս փոխարեն:  
Նրանից փրկանք յես չվերցրեցի  
Յեվ այնպես թողի նրան կապույտ ծով: —  
Ծերուկի վրա պառավը զոռաց—  
— Դու հիմար, անմիտ, ծերուկ քավթառած,  
Շնորհք չունեցար փրկանք խնդրելու,  
Գոնե մի տաշտակ խնդրեյիր, վոր տա,  
Մեր տաշտակը հին ձեզվել և վազուց:

Ծերուկը գնաց դեպ ծովը կապույտ,  
Տեսավ, ծովը նա ծփում ե մեղմիկ,  
Հսկակ կանչել վոսկի ձկնիկին,  
Չուկը դուրս լողաց, հարցրեց ծերուկին.  
— Ի՞նչ ե հարկավոր, քեզ, իմ ալեգոր,  
Նա գլուխ տվեց և պատասխանեց.  
— Վողորմած յեղիր, թագուհի ձկնիկ,  
Հայնոյում ե ինձ կինս ավելի,  
Հանգիստ չի տալիս ինեղմ ալեկորիս,  
Խրճիթ ե ուզում կինը կռվարար: —  
Յեվ պատասխանեց ձկնիկը վոսկի  
— Թող այդպես լինի, խրճիթ կունենաք:

— Տեր աստված քեզ հետ, մի տիրի, գնա,  
Այսոր դուք մի նոր տաշտակ կունենաք:

Ծերը տուն դարձավ պառավ կնոջ մոտ,  
Պառավի առաջ—նոր փայտե տաշտակ.  
Բայց նա սկսեց ել ափելի գոռալ—  
— Դու հիմար, անմիտ, ծերուկ քավթառած,  
Գնացիր, անխելք, խնդրեցիր տաշտակ,  
Ի՞նչ ոգուտ, ի՞նչ շահ տաշտակից դատարկ,  
Դե գնա, հիմար, նորից ձկան մոտ  
Գլուխ տուը նրան և խրճիթ խնդրիր:

Ծերուկը գնաց դեպ ծովը կապույտ,  
(Պղտորված տեսավ նա ծովը կապույտ).  
Սկսեց կանչել վոսկի ձկնիկին,  
Չուկը դուրս լողաց հարցրեց ծերուկին—  
— Ի՞նչ ե հարկավոր, քեզ, իմ ալեգոր,  
Նա գլուխ տվավ և պատասխանեց—  
— Վողորմած յեղիր, թագուհի ձկնիկ,  
Հայնոյում ե ինձ կինս ավելի,  
Հանգիստ չի տալիս ինեղմ ալեկորիս,  
Խրճիթ ե ուզում կինը կռվարար: —  
Յեվ պատասխանեց ձկնիկը վոսկի  
— Թող այդպես լինի, խրճիթ կունենաք:

Ծերը յետ դարձավ դեպի տղնը հին,  
Տունը հողաշեն ել նա չգտավ.  
Դեմը մի խրճիթ վերնասենյակով  
Յեվ աղյուսաշար լայն ձխնելույզով:  
Նա ուներ կաղնու տախտակից դարպաս:

Պատուհանի տակ պառավս եր նստել,  
 նա ծերին նորից անխծեց սաստիկ—  
 —Դու անմիտ քավթառ, իսկական ապուշ,  
 Գնացիր, ապուշ, ինդրեցիր խրճիթ,  
 Յետ գարձիր, գնա, գլուխ տուր ձկնիկին,  
 Ասա, չեմ ուղում գեղջկուհի մնալ,  
 Ուզում եմ ազնիվ յես տիկին դաշնալ:  
 Ծերուկը զնաց դես ծովը կապույտ,  
 (Անհանգիստ գաւակ նա ծովը կապույտ).  
 Հսկսեց կանչել վոսկի ձկնիկին,  
 Զուկը դուրս լողաց հարցրեց ծերուկին—  
 —Ի՞նչ ե հարկավոր քեզ, իմ ալեվոր,  
 Նա գլուխ տվակ և պատասխանեց—  
 —Վողորմած յեղիր, թաղուհի ձկնիկ,  
 Կատաղել ե չար կինս ավելի,  
 Հանգիստ չի տալիս խեղճ ալեվորիս,  
 Ել նա չի ուղում գեղջկուհի մնալ,  
 Ուզում ե ազնիվ նա տիկին դառնալ:  
 Յել պատասխանեց ձկնիկը վոսկի—  
 —Տեր ասոված քեզ հետ, մի տիրի, գնա:  
  
 Ծերը տուն գարձավ պառավ կնոջ մոտ:  
 Այս ինչ ե տեսնում.—բարձրացերձ մի տուն.  
 Սանդուխքի զլխին իր կինը պառավ,  
 Վրան սամուրե տաքուկ քաթիրա,  
 Գլխին գիլակե վոսկեթել զլխարկ,  
 Վզին շարե-շար փայտւն մարգարիտ,  
 Մատներին վոսկի մատնիքներ անգին,  
 Վոտքերին կոշիկ կաս—կարմիր կաշվից:  
 Մոտը ծառաներ հլու—հպատակ,

Ծեծում ե նրանց, նա ժաղից քաշում,  
 Ասում ե ծերը իր պառավ կնոջ.  
 —Բարե քեզ, խանում, տիկին իմ ազնիվ,  
 Գոհ ես խոմ հիմա, հոգիդ ե հանգիստ,  
 Բայց վրան գոռաց իր կինը պառավ,  
 Ուղարկեց ախոռ, ծառայի իրեն:  
  
 Մեկ-յերկու շաբաթ անցկացավ, գնաց,  
 Պառավը նորից կատաղեց սաստիկ.  
 Ծերուկին ելի քշեց ձկան մոտ.  
 —Յետ գարձիր, գնա, գլուխ տուր ձկնիկին,  
 Չեմ ուղում լինել յես ազնիվ տիկին,  
 Ուզում եմ լինել ազատ թագուհի:—  
 Ծերը վախեցավ, աղաչեց նրան,  
 —Քեզ ի՞նչ պատահեց, գժվել ես գուցե,  
 Շեն-շնորհք չունես, վոչ խոսել գիտես,  
 Վողջ յերկրը դու կծիծաղացնես:—  
 Բարկացավ ավել կինը այն պառավ,  
 Ամուսնու ալտին հասցրեց մի ապուակ,  
 —Ինչպես ես, գեղջուկ, հանգնում, անգետ,  
 Վիճել ինձ նման ազնիվ տիկնոջ հետ,  
 Դու ծովափ գնա, ասում եմ պատվով,  
 Թե վոր չգնաս, քարշ կտան զոռով:  
  
 Ծերուկը նորից ծովի ափ գնաց,  
 (Ծովը այն կապույտ տեսավ սեացած).  
 Հսկսեց կանչել վոսկի ձկնիկին,  
 Զուկը դուրս լողաց, հարցրեց ծերուկին—  
 —Ի՞նչ ե հարկավոր, քեզ իմ ալեվոր,—  
 Նա գլուխ տվակ և պատասխանեց—

—Վողորմած յեղիք, թագուհի ձկնիկ,  
Կովում և դարձյալ կինը իմ պառավ,  
Զի ուզում լինել ել ազնիվ տիկին,  
Ուզում ել լինել ազատ թագուհի:  
Յեկ պատասխանեց ձկնիկը վոսկի —  
—Տեր ասոված քեզ հետ, մի տիրի, գնա,  
Թող կինդ ազատ թագուհի դառնա:

Ծերունին նորից կնոջ մոտ յեկավ,  
Դեմը ապարանք, պերճ, արքայական,  
Պալատում տեսավ նա իր պառավին,  
Սեղան եր նստել, դառած թագուհի:  
Ծառայում եյին իշխաններ ազնիվ,  
Նրան գինիով պատվում թանկագին,  
Մեղրաբլիտ եր նա ուտում քաղցրահամ.  
Նրա շուրջ բոլոր ահեղ պահազորք,  
Ուսերին փոքրիկ կացիններ սրած:  
Ծերը վոր տեսավ, վախեցավ սաստիկ,  
Խոնարհվեց, ընկավ վոտքերը պառավի,  
Ասավ, —Վողջ յեղիք, հզոր թագուհի,  
Գոհ ես խոմ հիմա, հանգիստ ե հոգիու  
Նրան չնայեց պառավը իսկի,  
Հրամայեց նրան վանդել հեռու:  
Առաջ վաղեցին իշխաններն ազնիվ,  
Խփեցին մեջքին և վզակոթին,  
Դռներում նրան պահազորքն այն  
Ուզեց կտրատել սուր կացիններով,  
Ամբոխը գրսում վրան ծիծաղեց —  
—Տեղն ե քեզ, անտաշ և հիմար, —ասեց,  
—Քեզ համար, անտաշ, թող խրատ լինի,  
Վերմակիդ չափով վոտքերդ մեկնի:

Մեկ-յերկու շաբաթ անցկացավ գնաց,  
Պառավը նորից կատաղեց սաստիկ,  
Ուզարկում ե նա իր իշխաններին,  
Վոր գտնեն, բերեն իր մոտ ծերուկին.  
Յերբ գտան բերին, նա ասաց ծերին —  
—Յետ դարձիր, գնա, գլուխ տուր ձկնիկին,  
Զեմ ուզում, ասա, լինել թագուհի,  
Ուզում եմ դառնալ ծովի տիրուհի,  
Ովկիան —ծովում ապրել եմ ուզում,  
Վոր ինձ ծառայի ձկնիկը վոսկի,  
Ուր վոր ուզարկեմ, նա իսկույն լսիւ  
Ծերուկը նրան չհակածառեց,  
Յեկ վոչ մի տրտունջ չհայտնեց իսկի.  
Նորից նա դիմեց գեպ ծովը կապույտ:  
Փոթորկվել եր խստ, ծովը սեացել,  
Սլիքներն եյին ուռել և փքվել  
Փրկիրում եյին և վունում զաժան,  
Նա կանչեց գարձյալ վոսկի ձկնիկին,  
Չուկը գուրս լողաց, հարցրեց ծերուկին —  
—Ի՞նչ ե հարկավոր, քեզ իմ ալեվոր, —  
Նա գլուխ տվավ և պատասխանեց —  
Վողորմած յեղիք, թագուհի ձկնիկ,  
Ինչ անեմ յես այդ նզովյալի հետ,  
Ել չի կամենում լինել թագուհի,  
Ուզում ե գառնալ ծովի տիրուհի,  
Վզում ե ապրել Ովկիան —ծովում,  
Վոր գուշ ել նրան լսես, ծառայես,  
Ուր վոր ուզարկի, իսկույն կատարես,  
Ել վոչինչ չասաց ձուկը ծերուկին,  
Չուրը նա միայն ճողինց իր պոչով,

Ու գնաց, սուզվեց խորքերը ծովին  
Ծերուկը յերկար մնաց ծովափին,  
Բայց չարժանացավ նա պատասխանի:  
Ծերունին քայլեց, յեկավ կնոջ մոտ,  
Դիմացը դարձյալ տունն եր հողաշեն,  
Տեսավ նա շեմքին պառավին նստած,  
Առաջն ել կոտրած տաշտակն եր ընկած»

ՀԵՐԵՍԻ ՎՈՍԿԵ ՄԻՒԼՈՐԻԿԻ ՄԱՍԻՆ  
1834

Այնտեղ անհայտ մի աշխարհում,  
Յոթը սարից այն կողմ, հեռու,  
Կար Դադոնը՝ մի թագավոր,  
Զահել որից միշտ փառավոր:  
Հարեվանին իր շատ հաճախ  
Նեղացնում եր նա քաջ, անվախ,  
Բայց ծերութիւն իր որերին  
Վերջ տալ ուզեց նա մարտերին,  
Ապրել ուզեց խաղաղ կյանքով:  
Բայց հենց այստեղ գրացիք խոռվ  
Շատ նեղեցին թագավորին՝  
Նրան սաստիկ վսաս բերին,  
Սահմանները իր տերության  
Ուզեց պահել նա անսասան,  
Դրա համար նրան այստեղ  
Պետք եր մի մեծ բանակ ահեղ:  
Զորավարներ կային անքուն:  
Բայց թշնամուն չեցին հասնում:  
Սպասեյին թե հարավից,  
Զորք եր թափվում արևելքից.  
Վերջ կտաչին նրան այստեղ:  
Ծովից կդար հյուրը ահեղ:  
Քիչ եր մնում նա լաց լիներ,  
Դադոն արքան քունը կորցներ.  
Ել ինչ կանք կար նրա համար,—

Յեվ ոգնության համար ահա  
Նա դիմում ե մի իմաստուն  
Աստղագուշակ ծեր ներքինուն:  
Սուբհանդակն ե նրան կանչում  
Դադոնի մոտ: Յեվ իմաստուն  
Ծերն ե գալիս, միջից պարկի  
Մի աքաղաղ հանում զոսկի:  
—Դու նստացրու այս թռչունին,—  
Դիմեց այսպես նա արքային,  
Չողի վրա և կդառնա,  
Նա քեզ համար պահակ անմահ:  
Թե զոր շուրջը խաղաղ լինի  
Սա ել հանգիստ, լուռ կրնստի,  
Բայց թե դրսի կողմից սկսված  
Քո գեմ կոփ լինի հանկարծ,  
Կամ ուզմական ուժ հարձակվի,  
Կամ մի ուրիշ փորձանք լինի  
Իմ աքլորը այն վայրկյանին  
Իր կատարը կը արձրացնի,  
Զիր կը կանչի, կը թփրտա.  
Ու նույն կողմը նա շուռ կդա:—  
Յեվ շնորհակալ յեղավ արքան,  
Յեվ խոստացավ վոսկի նրան:  
—Յես փոխարեն այս լավության,—  
Գոչեց արքան գոհ, բարձրաձայն,  
—Քո առաջին կամքը—հրաման  
Կը կատարեմ իմի նման:

Յեվ աքլորը նստած ձողին,  
Ակսեց հսկել սահմաններին.

Թե սպառնար վտանգ հանկարծ,  
Հավատարիմ պահակ դառած,  
Նա կը շարժվեր, կը թփրտար,  
Հենց այն կողմը նա շուռ կդար,  
Յեվ կը գոռար—կը ըի-կու-կու-կու-  
Դեհ, վայելիր հանգիստ դու քուն:  
Դրացիները հանգստացան,  
Զեն հարձակվում արդեն նրանք:  
Դադոն արքան ահ ներշնչեց  
Ամեն կողմից նրանց ձնշեց:  
Տարիք անցան խաղաղ, անպարտ,  
Յեվ աքլորն ե նստած հանգարտ:  
Մի որ հանկարծ մեծ աղմուկից  
Դադոն արքան զարթնեց քնից:  
—Ժողովրդի հայր—թագավոր,  
Զորավարը գոչեց հզոր,  
—Տեր, արթնացիր. աղետ ե մեծ.  
—Իմ պարոնայք, բնչ պատահեց:—  
Հարցրեց արքան հորանջելով.  
—Ել ինչ յեղավ, եղ ով ե, ով:  
—Աքաղաղը նորից կանչեց:—  
Զորավարը պատասխանեց.  
Վողջ քաղաքում աղմուկ և ահ  
Արքան տեսավ ձողի վրա  
Իր աքլորն ե հա թփրտում,  
Դեպ արևելք անվերջ նայում:  
—Ուշացնելու կարիք չկա,  
—Հեյ ժողովուրդ, ձիանց վրա...  
Նա արևելք զորք ուղարկեց,  
Ավագ վորդին առաջնորդեց:

Յեկ աքլորը հանգստացավ,  
 Արքան նորից խոր քուն մտավ:  
  
 Ութ որ անցավ, իսկ այն զորքից  
 Լուր չեր գալիս վոչ մի կողմից,  
 Յեկ կռվում են, թե չեն կռվում,  
 Ծեր Դադոնին չեն հաղորդում:  
 Յեկ աքլորը նորից կանչեց.  
 Արքան ելի զորք հավաքեց.  
 Յեկ այս անգամ կըրտսեր վորդին  
 Ուզարկվում ե փրկել մեծին:  
 Աքաղաղը լռեց նորից,  
 Բայց լուր չկա վոչ մի կողմից:  
 Անցավ գնաց ութ որ կրկին  
 Վախը պատեց մարդկանց հոգին:  
 Աքաղաղը նորից կանչեց.  
 Յերբորդ անգամ զորք հավաքվեց,  
 Դեպ արևելք արքան նրանց  
 Ինքը տարավ տարակուսած,

Զորքն ե գնում որ ու գիշեր,  
 Վհշ վոք իր մեջ ել ուժ չուներ:  
 Արյան դաշտի, իջնանի,  
 Վոչ բարձրացող գերեզմանի—  
 Դադոն արքան չհանդիպեց:  
 —Այ քեզ իրացք, նա մտածեց:  
 Յերբ ութերորդ որը անցավ,  
 Բարձր սարեր արքան տեսավ,  
 Իսկ արանքում ահա պայծառ  
 Մի մետաքսե մեծ տաղավար:

Յեկ սքանչելի այնտեղ անդորր...  
 Իսկ նեղ կիրճում և շուրջ բոլոր  
 Զորք եր ջարդված, թափված մնում:  
 Դեպ վրանն ե արքան դիմում.  
 Ինչ սոսկալի, գա՞րշ տեսարան...  
 Նրա առաջ յերկու—տղան,  
 Անսաղավարտ և անզրահ,  
 Անկենդան են ընկած ահա,  
 Զույգ սրերը իրար իրած,  
 Իսկ ձիերը, մարդում անսանձ,  
 Թափառում են այն վոտնահար  
 Յեկ արյունոտ խոտի վրա:  
 —Ո՞հ, վորդիներ.—լացեց արքան.  
 —Ավա՞ղ, ավա՞ղ, ցանցն ընկան  
 Իմ զույգ բազեն արագաթեվ,  
 Ավա՞ղ մոտ ե մահը իմ սե...  
 Յեկ բոլորը լացին մեկտեղ,  
 Յեկ գղրդաց, —տնօքաց ահեղ  
 Զորի խորքը, սիրտը սարի,  
 Բացվեց փեշը տաղավարի,  
 Շեմքին աղջիկ՝ մի դիցուհի,  
 Շամախանի պերճ թագուհին.  
 Արշալոյսի նման փայլեց  
 Յեկ արքային լուռ վողջունեց:  
 Արեի գեմ—ինչպես մի բու,  
 Լռեց արքան արյունաբու,  
 Նայեց նրան և մոռացավ  
 Մահը վորդոց և ամեն ցավ:  
 Իսկ նա ժպտաց ծեր Դադոնին,  
 Յեկ խոնարհվեց միշև գետին,

Զեռքը հետո զգուշ բռնեց,  
Իր վրանը նրան բերեց:  
Հյուրասիրեց նրան սիրով,  
Ամեն տեսակ բարիքներով.  
Յեվ քնացրեց նա արքային,  
Տակը փոեց խառ անկողին:  
Ամբողջ լոթ որ անցավ, գնաց.  
Նատած խոնարհ նրա դիմաց,  
Դադոն արքան քեֆ եր անում,  
Յեվ կախարդված նրան նայում:

Վերադարձի ճամբեն արքան  
Իր վողջ ուժի հետ մարտական,  
Յեվ աղջկա հետ այն ջահել.  
Նա վաղուց եր ալդեն բռնել...  
Նրա առաջ լուրն եր վազում,  
Յեղած, չեղած բաներ պատմում.  
Յեվ քաղաքի դարպաներում  
Ժողովուրդն ե դիմավորում,  
Հետևելով ձիակառքին,  
Պերճ թագուհուն և Դադոնին,  
Վողջունում ե արքան նրանց,  
Ու նրանց մեջ տեսնում հանկարծ,  
Սարակինյան գլխարկ հագած,  
Կարապի պես վողջ ճերմակած,  
Հին բաեկամ իր նիրքինուն:  
—Միշտ վողջ յեղիր, հայրը իմաստուն,—  
Դիմեց արքան,—ասա, խոսիր,  
Դե, մոտ արի և հրամայիր:  
—Արքա, —ասավ ծեր ներքինին,

—Ժամն ե մաքրել հաշիվը հին,  
Հիշեր, խոսք ես տվել ինձ դու<sup>ւ</sup>  
Լավությունս վարձատրելու,  
Յեվ առաջին կամքս—հրաման  
Կատարելու քոնի նման,  
Ինձ նվիրիր այդ դիցուհուն,  
Շամախանի պերճ թագուհուն  
Թագավորը շատ զարմացավ,  
—Քեզ ինչ յեղավ,—նրան ասավ,  
—Յե սատանա մեջդ մտավ,  
Կամ թե խելքդ գուցե թռավ,  
Յեվ ինչ մացրիր գլուխդ ալդպես,  
Խոստացել եմ, ճիշտ յեզ,  
Ամեն ինչին չե, սահման կա,  
Դու պետք չունես այս աղջկա  
Յեվ լավ գիտես, թե ով եմ յես,  
Խողըիր ինձնից ինչ վոր ուզես,  
Իշխանություն, կամ զանձ և փոք  
Իմ ախոռից ձի արշավող,  
Կեսը խնդրի իմ յերկրի...  
—Վոչինչ քեզնից յես չեմ ուզի,  
Ինձ նվիրիր այդ դիցուհուն,  
Շամախանի պերճ թագուհուն:  
Ասաց ծերը ի պատասխան:  
—Թքեց արքան, —տեսեք սրան:  
Ինձնից վոչինչ չես ստանա,  
Քանի վողջ ես, կորի, գնա,  
Զուր մի տանջի դու քո հոգին,  
Դե, հեռացըք այս ծերուկին:  
Ծերը ուզեց ասել, գիճել

Արքաների հետ լավ չե կովել,  
 Քավաղանով արքան խփեց,  
 Լայն ճակատին. ծերը փուլեց,  
 Շունչը փչեց: — Ճնշվեց մոլոր  
 Վողջ քաղաքը: — Աղջիկն եր վոր,  
 Մեկ—հի, հի, մեկ—հա, հա, հա,  
 Մեղքից կարծես չեր վախում նա:  
 Թեպետ արքան շատ եր հուզված,  
 Բայց աղջիան նա մեղմ ժապաց.  
 Թաղաք մտավ գորքի հետ հոծ,  
 Մեկ ել լսվեց թեթև դնդոց,  
 Վողջ քաղաքը հանկարծ տեսավ,  
 Վոր աքլորը ձողից թռավ,  
 Չիակառքին հասավ, թառեց,  
 Յեվ արքայի գլխին նստեց,  
 Կացահարեց, խփեց դլխին,  
 Ու վեր ճախրեց... նույն վայրկյանին  
 Դադոն արքան կառքից բնկավ,  
 Խոր ախ քաշեց, հետո մեռավ,  
 Թագուհին ել կորավ հանկարծ,  
 Կարծես վոչինչ չեր պատահած...  
 Հեքյաթը սուտ, բայց ակնարկող,  
 Զահելներին լավ դաս տվող:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

- |                               |    |
|-------------------------------|----|
| Հեքյաթ թակավոր Սալբանի մասին  | 7  |
| Հեքյաթ ձկնորսի և ձկնիկի մասին | 48 |
| Հեքյաթ վոսկե աքլորիկի մասին   | 58 |

Թարգմ. Հռ. Պողոսյան

Անվանաթերթը՝ Արարատ Դարիքյանի

Տելու խմբագիր՝ Լ. Ոհանյան

Սրբագրիչներ՝ Հ. Մանուկյան, Հ. Գոլուխանյան

023

Գլազիոնի լիազոր կ-4480, Հրտա. 3885, Տլրաժ 3000, Գառվեր 121

Գետհրատի ապարան, Յերևան, Ա Կոունյանցի, Խ 4



«Ազգային գրադարան»

NL0395391

4839

9762 30-20 v.  
9762 10-204.